Կ-882[1]- 09.07.2024-ՏՀ-011 **Երկրորդ ընթերցում**

(Լրամշակված նախագիծ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 158-րդ հոդվածի՝

1) 43-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«43. Առևտրի օբյեկտներում և առևտրի իրականացման վայրերում կաթնամթերք ապրանքախմբի (արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 04 ապրանքային խմբին դասվող) առանց կաթնային յուղի (կաթնային ճարպի) փոխարինիչի կաթնամթերքը տարանջատված մեկուսամասում կանաչ գունային առանձնացված սպառողական դարակաշարով (հատվածով), իսկ կաթնային յուղի (կաթնային ճարպի) փոխարինիչով կաթնամթերքը տարանջատված մեկուսամասում նարնջագույն գունային առանձնացված սպառողական դարակաշարով (հատվածով) ապահովված չլինելը կամ կանաչ դարակաշարում «առանց կաթնային յուղի (կաթնային ճարպի) փոխարինիչի», իսկ նարնջագույն դարակաշարում՝ «պարունակում է կաթնային յուղի (կաթնային ճարպի) փոխարինիչ» անվանումով տեղեկատվական պիտակը դարակաշարի տեսանելի մասում տեղադրված չլինելը կամ սխալ պիտակ փակցված լինելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:»:

2) 44-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«44. Սույն հոդվածի 43-րդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:»:

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 48-րդ և 49-րդ մասերով.

«48. Տեղական արտադրության կամ ներմուծված կենդանուց սպանդանոցային մորթի հետևանքով ստացված կենդանական ծագման հումքի և մթերքի նույնականացումը ապահովելու նպատակով՝ սպանդանոցային ծագումը հիմնավորող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված փաստաթղթերը սպառողներին տեսանելի տեղում չփակցնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

49. Սույն հոդվածի 48-րդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 219[1]-րդ հոդվածի 2-րդ մասում «37-45-րդ» բառերից հետո լրացնել «,48-49-րդ» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասում «46-րդ» բառից հետո լրացնել «,48-րդ և 49-րդ» բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երեսուներորդ օրը՝ բացառությամբ 1-ին հոդվածի 3-րդ կետով Օրենսգրքի 158-րդ հոդվածում լրացվող 48-րդ և 49-րդ մասերի, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակումից երկու ամիս հետո:

~~*Առաջին*~~ *Երկրորդ ընթերցում*

Լրամշակված նախագիծ

(Կ-882-09. 07. 2024-ՏՀ-011/1)

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) ~~Օրենսգրքի~~ 158-րդ հոդվածի՝

1) 43-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«43. Առևտրի օբյեկտներում և առևտրի իրականացման վայրերում կաթնամթերք ապրանքախմբի (արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 04 ապրանքային խմբին դասվող) առանց կաթնային յուղի (կաթնային ճարպի) փոխարինիչի կաթնամթերքը տարանջատված մեկուսամասում կանաչ գունային առանձնացված սպառողական դարակաշարով (հատվածով), իսկ կաթնային յուղի (կաթնային ճարպի) փոխարինիչով կաթնամթերքը տարանջատված մեկուսամասում նարնջագույն գունային առանձնացված սպառողական դարակաշարով (հատվածով) ապահովված չլինելը կամ կանաչ դարակաշարում «առանց կաթնային յուղի (կաթնային ճարպի) փոխարինիչի», իսկ նարնջագույն դարակաշարում՝ «պարունակում է կաթնային յուղի (կաթնային ճարպի) փոխարինիչ»

անվանումով տեղեկատվական պիտակը դարակաշարի տեսանելի մասում տեղադրված չլինելը կամ սխալ պիտակ փակցված լինելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:»:

2) 44-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«44. Սույն հոդվածի 43-րդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:»:

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ ~~47-րդ և 48-րդ~~ 48-րդ և 49-րդ մասերով՝

«~~47~~ 48 ~~Սպանդանոցային ծագման տեղական արտադրության կենդանական ծագման մթերքի եւ հումքի նույնականացումը ապահովելու նպատակով՝ սպանդանոցային ծագումը հիմնավորող Կառավարության որոշմամբ սահմանված փաստաթղթերը սպառողներին տեսանելի տեղում չփակցնելը՝~~ Տեղական արտադրության կամ ներմուծված կենդանուց սպանդանոցային մորթի հետևանքով ստացված կենդանական ծագման հումքի և մթերքի նույնականացումը ապահովելու նպատակով՝ սպանդանոցային ծագումը հիմնավորող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված փաստաթղթերը սպառողներին տեսանելի տեղում չփակցնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

~~48~~ 49. Սույն հոդվածի ~~47-րդ~~ 48-րդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:»:

Հոդված ~~3~~ 2. Օրենսգրքի 219~~1~~[1]-րդ հոդվածի 2-րդ մասում «37-45-րդ» բառերից հետո լրացնել «,~~47-48-րդ~~ 48-րդ - 49-րդ» բառերով:

Հոդված ~~4~~ 3. Օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասում «46-րդ» բառից հետո լրացնել «,~~47-րդ և 48-րդ~~ 48-րդ և 49-րդ» բառերով:

Հոդված ~~5~~ 4. ~~Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երեսուներորդ օրը:~~ . Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երեսուներորդ օրը՝ բացառությամբ 1-ին հոդվածի 3-րդ կետով Օրենսգրքի 158-րդ հոդվածում լրացվող 48-րդ և 49-րդ մասերի, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակումից երկու ամիս հետո:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-882-09. 07. 2024-ՏՀ-011/1) ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-882[1]- 09. 07. 2024-ՏՀ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկությանն վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-882-09. 07. 2024-ՏՀ-011/1)					
1	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում «նոր» բառն առաջարկվում է փոխարինել «հետևյալ» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:

2	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածի «և» բառը փոխարինել «,» կետադրական նշանով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Հաշվի առնելով, որ ներմուծված կենդանուց սպանդանոցային մորթի վերաբերյալ կարգավորումը բացակայում է՝ առաջարկում ենք նախագծի 3-րդ հոդվածով նախատեսվող օրենքի 9-րդ հոդվածում լրացվող 15.1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «15.1 «Տեղական արտադրության կամ ներմուծված կենդանուց սպանդանոցային մորթի հետևանքով ստացված կենդանական ծագման հումքի և մթերքի նույնականացումը ապահովելու նպատակով՝ սպանդանոցային ծագումը հիմնավորող Կառավարության որոշմամբ սահմանված փաստաթղթերը փակցվում են սպառողներին տեսանելի տեղում:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածով նախատեսվող օրենքի 9-րդ հոդվածում լրացվող 15.2-րդ մասում «Կառավարությունը» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարությունը» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:

5	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 9-րդ հոդվածի 15.3-րդ մասը խմբագրվել է, սակայն բովանդակային փոփոխություն չի կատարվել:	Ընդունվել է:	Ընդունվել է:
6	ՀՀ կառավարություն	Նախագծի 4-րդ հոդված	Հաշվի առնելով, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 238-րդ հոդվածի համաձայն՝ օրենսգրքի 158-րդ հոդվածի 43-44-րդ մասում սահմանված վարչական խախտումը քննում է Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը, ինչպես նաև օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 15. 3-րդ մասով լրացումը, որը դիտարկվելու է սպառողներին մոլորության մեջ գցող գործողություն և գործի քննումը վերապահվելու է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովին՝ անհրաժեշտ է ««Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ, այն է՝ «**Հոդված 4.** Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասում «4-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի, 5-րդ հոդվածի 1-ին մասի,»	Ընդունվել է:	Ընդունվել է:

			բառերը փոխարինել «4-րդ հոդվածի 1-ին, 2. 1-ին և 6-րդ մասերի, 5-րդ հոդվածի 1-ին և 3.1-ին մասերի,» բառերով, իսկ «և 15-րդ մասի «գ» կետի,» բառերը փոխարինել «,15-րդ մասի «գ» կետի, 15. 1-ին և 15. 3-րդ մասերի,» բառերով:»:		
7	ՀՀ կառավարություն	Նախագծի 5-րդ հոդված	Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ մասերի պահանջները, որոնց համաձայն՝ նորմատիվ իրավական ակտն ունենում է անցումային դրույթներ, եթե՝ 1) նորմատիվ իրավական ակտը լրիվ գործողության մեջ դնելու համար պահանջվում են ժամկետներ կամ որոշակի պայմաններ, կամ (...), ինչպես նաև, հաշվի առնելով նախագծով լրացվող 15 .1-ին մասը, որով անհրաժեշտություն է առաջանալու ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1499-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ առաջարկում ենք նախագծի 5-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ . **Հոդված 5. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**	Ընդունվել է:	Ընդունվել է:

			1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երեսուներորդ օրը՝ բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածի 15.1-ին մասի, որն ուժի մեջ է մտնելու պաշտոնական հրապարակումից երկու ամիս հետո: 2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքի պաշտոնական հրապարակումից հետո՝ եռամսյա ժամկետում:»:		
«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-882[1]- 09. 07. 2024-ՏՀ-011/1)					
1	ՀՀ կառավարություն	1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածից առաջարկում ենք հանել «(այսուհետ՝ Օրենսգիրք)» բառերից հետո նշված «Օրենսգրքի» բառը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2	ՀՀ կառավարություն	1-ին հոդված	2025 թվականի հունվարի 22-ին ընդունված ««Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-13-Ն օրենքի համաձայն՝ Օրենսգրքի 158-րդ հոդվածում	Ընդունվել է:	Ընդունվել է:

			կատարվել է լրացում 47-րդ մասով, հետևաբար առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասով լրացվող «47-րդ» բառը փոխարինել «48-րդ»,ինչպես նաև լրացնել «49-րդ» բառը և շարադրել հետևյալ խմբագրությամբ համաձայն ««Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի 3-րդ հոդվածով լրացվող 15.1-ին մասի համաձայն: «3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 48-րդ և 49-րդ մասերով:»: 48. Տեղական արտադրության կամ ներմուծված կենդանուց սպանդանոցային մորթի հետևանքով ստացված կենդանական ծագման հումքի և մթերքի նույնականացումը ապահովելու նպատակով՝ սպանդանոցային ծագումը հիմնավորող Կառավարության որոշմամբ սահմանված փաստաթղթերը սպառողներին տեսանելի տեղում չփակցնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝		

			սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով: 49. Սույն հոդվածի 48-րդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:»:		
3	ՀՀ կառավարություն	3-րդ հոդված	Նախագծի 1-ին հոդվածին հաջորդում է 3-րդ հոդվածը, ուստի առաջարկում ենք շտկել Նախագծի հոդվածների համարակալման հաջորդականությունը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված պահանջը, այն է՝ «Օրենսդրական ակտերում նորմերը շարադրվում են հերթական համար ունեցող հոդվածների տեսքով»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4	ՀՀ կառավարություն	3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածում առկա է վրիպակ, առաջարկում ենք շտկել	Ընդունվել է:	Ընդունվել է:

			հոդվածի հերթական համարը, այն է՝ «2191-րդ» թիվը փոխարինել «**219**[1]-ին» թվով:		
5	ՀՀ կառավարություն	3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածի «,47-48-րդ» բառերը առաջարկում ենք փոխարինել «,48-49-րդ» բառերով: Փոփոխությունը պայմանավորված է 2025 թվականի հունվարի 22-ին ընդունված ՀՕ-13-Ն օրենքով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
6	ՀՀ կառավարություն	4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածի «,47-րդ և 48-րդ,» բառերը փոխարինել «,48-րդ և 49-րդ,» բառերով: Փոփոխությունը պայմանավորված է 2025 թվականի հունվարի 22-ին ընդունված ՀՕ-13-Ն օրենքով:	Ընդունվել է:	Ընդունվել է:

7	ՀՀ կառավարություն	5-րդ հոդված	Հաշվի առնելով «Առևտրի և ծառայությունների մասին օրենքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի այն կարգավորումը, որ նախագծի 5-րդ հոդվածով առաջարկվող 15.1-ին մասը ուժի մեջ է մտնելու պաշտոնական հրապարակումից երկու ամսի հետո, այս համատեքստում առաջարկում ենք նախագծի 5-րդ հոդվածը շարադրել հետևայլ խմբագրությամբ՝ «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երեսուներորդ օրը՝ բացառությամբ 1-ին հոդվածի 3-րդ կետով Օրենսգրքի 158-րդ հոդվածում լրացվող 48-րդ և 49-րդ մասերի, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակումից երկու ամիս հետո:»:	Ընդունվել է:	Ընդունվել է: